Ծածկագիր

12-2-28.4-Մ2-1

Պաշտոնի Անվանում

Գլխավոր հոգեբան

Պաշտոնի Ամբողջական Անվանում

Քրեակատարողական ծառայություն | Կենտրոնական մարմին. | Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին | Գլխավոր հոգեբան

Անմիջական Ղեկավարի Պաշտոն (Օգտագործվում է վերապատրաստման հատվածում)

Քրեակատարողական ծառայություն | Կենտրոնական մարմին. | Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին | Բաժնի պետ

Պաշտոնի Անձնագրի Փոփոխման Նկարագրություն

Տեխնիկական փոփոխություններ

Ենթակա և հաշվետու է

Գլխավոր հոգեբանը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

Ենթակա և հաշվետու պաշտոններ

Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր հոգեբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի Գլխավոր մասնագետներից մեկը:

Աշխատավայր

Հայաստան, ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Արշակունյաց 63:

Աշխատանքի բնույթը (գործառույթներ)

1) իրականացնում է հսկողություն քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ Հիմնարկ) կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած անձանց հետ տարվող աշխատանքների նկատմամբ.

2) կազմակերպում է Հիմնարկներում հոգեբանական աշխատանքը, միջոցներ է ձեռնարկում այդ աշխատանքների կատարելագործման, միջազգային առաջավոր փորձի, նոր մեթոդների ներդրման և կիրառման ուղղությամբ.

3) դատապարտյալների դիմումների հիման վրա կատարում է կալանավորված անձանց և դատապարտյալների անհատական ընդունելություն և իրականացնում մասնագիտական խորհրդատվություն.

4) իրականացնում է հսկողություն Հիմնարկներում հաշվառման վերցված անձանց հետ տարվող աշխատանքների նկատմամաբ

Իրավունքները

1) մասնակցել Հիմնարկներից ստացված հաշվետվությունների ամփոփման աշխատանքներին,

2) մասնակցել ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման և լրամշակման աշխատանքներին,

3) մասնակցել Հիմնարկներում ԲՈՒՀ-երի ուսանողների (հոգեբանների) պրակտիկայի կազմակերպմանը.

4) ծանոթանալ դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից ներկայացված դիմումների բովանդակություններին, նյութերին.

5) Ծառայության ենթակա մարմինների տվյալ գործառույթն իրականացնող պատասխանատու անձանցից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն.

Պարտականությունները

1) համապատասխան հրամանի կամ ցուցումի հիման վրա կատարել և ամփոփել Հիմնարկների Բաժիններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով կազմված տեղեկանքները և, ըստ անհրաժեշտության, առաջարկություններ ներկայացնել Բաժնի պետին տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ կամ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ.

2) ուսումնասիրել ստացված փաստաթղթերը և նախապատրաստել իրավական ակտերի նախագծեր.

3) Հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած անձանց հետ իրականացնել հոգեբանական և բացատրական աշխատանքներ,

4) ուսումնասիրել կալանավորված անձանց և դատապարտյալների հոգեբանական կեցվածքը,

5) ուսումնասիրել ստացված դիմումները, առաջարկությունները, օրենքով սահմանված ժամկետում պատասխանել դիմումներին, առաջարկություններին.

6) մասնակցել Հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների օգտակար զբաղվածությանն ուղղված նախաձեռնությունների զարգացման և իրականացման աշխատանքներին.

7) մասնագիտական և մեթոդական աջակցություն ցուցաբերել Հիմնարկների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին.

Կրթություն, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2.	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3.	Ենթաոլորտ	Հոգեբանություն
4.	Մասնագիտություն	Հոգեբանություն

Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ հոգեբանության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.

Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և (կամ) դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
    - Խնդրի լուծում
    - Հաշվետվությունների մշակում
    - Բարեվարքություն
    - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
    - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
    - Բանակցությունների վարում

- Կոնֆլիկտների կառավարում
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Փաստաթղթերի նախապատրաստում

Անվանացանկում Պաշտոնի Հաստատման Ամսաթիվ/Պաշտոնի ստեղծման ամսաթիվ

2020-05-26

Փակել